

Կ ար ծ ի ք

Մ հ ե ռ Ս ու լ ռ ե ն ի Ք ու լ մ ու լ ն ց ի «Ար ց ախ- Ս յ ու լ ն ի ք ի ք ար ք առ ա յ ի ն ք առ ապ աշ ար ը » դ ո կ տ ո ռ ա կ ա ն ա տ ե ն ախ ո ս ու լ թ յ ա ն վ ե ռ ա ք ե ռ յ ալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը պատմական բառագիտությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություն է, որի միջոցով առաջին անգամ բացահայտվում է նախահայերենի և հին հայերենի լեզվական նմուշների առկայությունը Հայաստանի երկու տարածամերձ շրջանների՝ Արցախի և Սյունիքի բառապաշարում:

Մհեր Սուրենի Քումունցի աշխատանքը հայ բարբառագիտության և պատմական բառագիտության կարևորագույն ու արդիական հետազոտություններից է: Իսկապես մեծ ծավալի աշխատանք է կատարվել հենց բարբառակրի կողմից: Աշխատանքում հեղինակը համակարգված և խորքային վերլուծության է ենթարկել Սյունիք-Արցախի բարբառների բառապաշարի պատմական շերտերը՝ նախահայերենից (հնդեվրոպական) մինչև հին հայերեն (գրաբարյան) և փոխառյալ տարրերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության, համառոտագրությունների և պայմանական նշանների ցանկերից:

Հին հայերենի՝ որպես խոսակցական լեզվի գործածությունից դուրս գալուց հետո գրավոր և խոսակցական լեզուների միջև առաջացած տարբերությունները հիմք դարձան, որպեսզի ոմանք տարբեր կարծիքներ հայտնեն գրաբարի՝ համաժողովրդական լեզու լինելու և բարբառների հետ ունեցած փոխհարաբերության վերաբերյալ: Նախահայերենի, գրաբարի և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ եղել են տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ, որոնցից կարևոր են երեքը.

ա) ավանդական-հնդեվրոպաբանական, ըստ որի՝ V դարում հայ բարբառներ չկան (ներկայացուցիչը՝ Հ. Աճառյան)

բ) V դարում և նրանից առաջ կան և եղել են հայ բարբառներ, որոնք, սակայն, առաջացել են միասնական հայերենի ազդեցությամբ՝ ցեղային լեզուներով խոսող և միաժամանակ հայացող հատվածներում (Գ. Ղափանցյան, Է. Աղայան),

գ) V դարում և նրանից առաջ կան բարբառներ, որոնք նախահայերենի ճյուղավորումից, տրոհումից առաջացած բարբառներ են (Գ. Սևակ):

Հետագայում յուրովի և հիմնավոր վերլուծություն կատարեց Գևորգ Ջահուկյանը: Այս և նման հարցերի վերաբերյալ Մհեր Քումունցը տալիս է մի շարք կարևոր մեկնաբանություններ:

Ատենախոսության վերնագիրը՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը», լիովին արտացոլում է աշխատանքի բուն նպատակադրումը և կիրառված մեթոդաբանությունը: Այն ճշգրտորեն մատնանշում է հետազոտության առանցքը՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառային կազմի համալիր քննությունը, որն իրականացվում է համաժամանակյա և պատմական զարգացման համատեքստերում՝ լուսաբանելով նախահայերենյան, գրաբարյան և փոխառյալ շերտերի փոխկապակցվածությունն այսօր կենդանի խոսքում գործառվող բառերի հետ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս լիարժեքորեն բացահայտելու բարբառի ներկա վիճակը՝ հիմնվելով նրա խորքային պատմական արմատների վրա:

Թեման խիստ արդիական է՝ պայմանավորված հայերենի բարբառների բառապաշարային քննության մեթոդաբանական բացերով, հայոց լեզվի արմատական ֆոնդի վերաիմաստավորման անհրաժեշտությամբ, ինչպես նաև Արցախի բարբառային ժառանգության պահպանման հրատապությամբ: Ատենախոսության մեջ Մ. Քումունցը գտնում է, որ Արցախ-Սյունիքի բարբառում տարրեր եղել են ինչպես գրաբարում, այնպես էլ նախահայերենում:

Հեղինակը նախ ներկայացրել է Արցախ-Սյունիքի պատմական տարածքը, այնուհետև՝ հիշյալ տարածաշրջանի բարբառային բառերի ուսումնասիրության հարցերը: Դրանից հետո, ուսումնասիրելով պատմական բառագիտության վերաբերյալ տեսական աղբյուրները (Ա. Վ. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթացը», Հ. Զ. Պետրոսյանի, Ս. Ա. Գալստյանի, Թ. Ա. Ղարազյուլյանի

«Լեզվաբանական բառարանը», Լ. Հովհաննիսյանի, Ա. Սարգսյանի «Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության կորուստներն ու պահպանման հիմնախնդիրները» և այլ աշխատություններ), ինչպես նաև հիմնվելով սեփական հետազոտությունների արդյունքների վրա (ինչպես, օրինակ՝ Մ. Քումունց, Լ. Հովհաննիսյան, «Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները» և այլն), ներկայացրել է պատմական բառագիտությունը՝ որպես գիտակարգ, դրա սահմանումը, խնդիրները, միջգիտակարգային կապերը և հայ պատմական բարբառագիտության հիմնական փուլերը: Նա անդրադարձել է բարբառային տարածքի լեզվանյութին, վաղ շրջանի հակագիտական մոտեցումներին՝ հիշատակելով, որ հայ բարբառների մասին «հիշատակություններ կան դեռևս V դարից (Մ. Խորենացի, Կորյուն, Դավիթ Մեկնիչ, Անանուն Մեկնիչ, Մովսես Քերթոզ և ուրիշներ), սակայն Ստեփանոս Սյունեցուն է պատկանում բարբառների դասակարգման առաջին փորձը» (ատ., էջ 8): Հ. Շրոդերի (1711) և Շահան Ջրպետի (1823) աշխատությունների շարքում հիշատակում է Գ. Ախվերդյանի կարծիքը, մեթոդաբանական տեսանկյունից կարևորում է նաև Ա. Այտրնյանի «Քննական քերականութիւն աշխարհաբարի կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունը: Պատմահամեմատական բարբառագիտության հիմքերը տեսնում է Քերովբե Պատկանյանի, Ալեքսանդր Թումսոնի, Հանուշի, Լ. Մսերյանցի, Հրաչյա Աճառյանի, Մ. Ասատրյանի, Է. Աղայանի, Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի, Ս. Ղազարյանի և Գ. Ջահուկյանի աշխատություններում, սակայն դրանցից առանձնացնում է հատկապես Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը», որին նախորդել էր «Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը» հոդվածը, որում հեղինակը, խուսափելով ծայրահեղություններից, ըստ էության, առաջարկում է համադրական և դիալեկտիկական տեսություն (տե՛ս ատ., էջ 16): Սույն տեսության մեջ Մ. Քումունցն արժևորում է Գ. Ջահուկյանի կարևոր ներդրումը, այն է՝ նա բարբառների ծագումը չի դիտարկում որպես մեկանգամյա ակտ (օրինակ՝ «ձևավորվել են XII դարում»), այլ որպես անընդհատ, շարունակական գործընթաց: Նա պնդում է. «Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ

պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով» (ատ., էջ 15-16):

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը Մ. Քումունցը ներկայացնում է ըստ ամերիկացի հայտնի լեզվաբան Կարլ Դարլինգ Բաքի «A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages» (1988) աշխատության: «Այս բառարանը եզակի է իր կառուցվածքով և նպատակադրմամբ. այն սովորական այբբենական խմբավորմամբ բառարան չէ, այլ բառապաշարի թեմատիկ-իմաստային դասակարգում՝ նվիրված «բառանվանումների կամ հասկացությունների պատմության» ուսումնասիրությանը: Կ. Բաքը բառերը խմբավորում է ըստ հասկացությունների, ինչպիսիք են «Ֆիզիկական աշխարհ», «Մարդ», «Ընտանիք», «Շարժում» և այլն: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հետևելու, թե ինչպես են հնդեվրոպական տարբեր ժողովուրդներ հայեցակարգել իրենց շրջապատող աշխարհը և վերացական գաղափարները» (ատ., էջ 18):

Ներածության մեջ դրվել են նաև մի շարք եզրույթների վերաբերյալ մեկնաբանություններ, որոնք բխում են ատենախոսության մեջ առաջադրված խնդիրներից և նպատակներից: Ատենախոսության մեջ գործածված եզրույթները խիստ տրամաբանելի են ատենախոսության գիտական բովանդակությունը արտահայտելու համար:

Առաջին գլխում հեղինակը, Կարլ Դարլինգ Բաքի, ապա Գ. Ջահուկյանի օրինակով, ընդգրկել է Արցախ-Սյունիք բարբառի բառապաշարում պահպանված հնդեվրոպական շերտի առտնին գործածության բառերի ողջ լեզվանյութը՝ տարբեր թեմատիկ խմբերով՝ «Ֆիզիկական աշխարհ», «Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ», «Կենդանիներ», «Մարմնի մասեր, մարմնական գործողություններ ու պայմաններ», «Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն», «Հագուստ, անձնական զարդարանք և խնամք», «Բնակարան, տուն, կահկարասի», «Երկրագործություն, բուսականություն», «Ֆիզիկական տարբեր գործողություններ», «Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն», «Ունեցվածք, սեփականություն և առևտուր», «Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ», «Քանակ և թիվ», «Ժամանակ», «Զգայական ընկալումներ», «Զգացմունք», «Մտածողություն, միտք», «Չայնային արտահայտություն, խոսք, ընթերցանություն և

գիր», ինչպես նաև այլ ոլորտներ՝ «Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ», «Ռազմական գործ», «Օրենք», «Կրոն և նախապաշարմունք», «Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ»՝ իրավացիորեն հիմնավորելով, որ այդ բառերը պահպանվել են հիշյալ տարածաշրջանի «մեկուսի դիրքի» շնորհիվ և դարձել «լեզվական յուրօրինակ «ամրոց»:

Թեմատիկ-համադրական մեթոդի կիրառմամբ և ստուգաբանական մեթոդյա քննությամբ Մ. Քումունցին հաջողվել է հնդեվրոպական ծագմամբ մի շարք բառերի առկայությունը հիմնավորել բարբառներում, օրինակ՝ «աջըղ», «հարու (տալ)», «հաճար», «գաղտնիկուտ > տըխտըկոնը», «պըտեզնը» «կեճ», «հասի», «թուփ > թուփ || թօփ (անել)» «թաթառ» «խըրթօկ» և այլն: Ատենախոսության կարևորագույն բաղադրիչներից են նախահայերենյան (հնդեվրոպական) բառաշերտի համեմատական-թեմատիկ տախտակները, որոնք կազմված են նորարարական մոտեցմամբ: Հեղինակը, հիմք ընդունելով Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի աշխատությունները, խնամքով կազմել և մշակել է բազմասյունակ աղյուսակներ, որոնք համադրում են հնդեվրոպական նախաձևերը, ընդհանուր հայերենի տվյալները և, առանցքային կերպով, Արցախ-Սյունիք բարբառախմբում պահպանված լեզվական նյութը: Տախտակներում հատուկ նշագրումներով (Բ. «բարբառ» ՄԱ «Սյունիք-Արցախ», ?ՄԱ) առանձնացված են բացառապես բարբառային միավորները, ինչպես նաև ծագումնաբանորեն վիճահարույց կամ թեական բառերը, որոնց վերաբերյալ հեղինակը ներկայացրել է սեփական բառաքննական վերլուծությունները: Այս մոտեցումը ոչ միայն համակարգում և վիճակագրորեն տեսանելի է դարձնում բարբառում պահպանված հնագույն բառաֆոնդի տեսակարար կշիռը, այլև կարող է համարվել պատմական բառագիտության և բարբառագիտության բնագավառում կիրառվող նորարարական մեթոդ՝ հիմք ստեղծելով հետագա ստուգաբանական ճշգրտումների համար: Համեմատական այս մեթոդը կարելի է կիրառել նաև այլ բարբառախմբերի ուսումնասիրության համար: Համեմատական տախտակներին հաջորդում են վիճակագրական տախտակները, որոնք բաղկացած են հինգ սյունակից և արտացոլում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքում նախահայերենյան բառաշերտի **«Համեմատական**

տախտակների» արդյունքները: Առաջին սյունակում տրված են միավորների թվահամարները, երկրորդում՝ քանակական կշիռը ըստ Կ. Բաքի, երրորդում ամփոփված է բարբառային վկայությունների քանակը հայերենում, ապա Սյունիք-Արցախում: Երրորդ սյունակում արտացոլված է արդյունքների հնարավորինս իրական և ճշգրիտ պատկերը՝ ստուգաբանական ճշգրտումներ պարունակող միավորները՝ ըստ հայերենի և նրա մեջ ընդգրկվող Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի բառերի: Չորրորդ և հինգերորդ սյունակներում բերված է հնդեվրոպական բառերի քանակը՝ համապատասխանաբար ըստ Գ. Ջահուկյանի կազմած բառամիավորների աղյուսակի, ապա Սյունիք-Արցախից ընտրված բառերի: Հեղինակը այս գործելառճով փորձել է հնարավորինս ճշտել բարբառային բառապաշարի նախահայերենյան շերտի բառերի քանակական կշիռը հայերենի և հնդեվրոպական մայր լեզվի համեմատությամբ:

Այսպիսով՝ աշխատանքը հիմնված է պատմահամեմատական լեզվաբանության դասական դրույթների և Կ. Բաքի ու Գ. Ջահուկյանի («Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան», 1987) թեմատիկ-իմաստային դասակարգման սկզբունքների վրա՝ կիրառելով համալիր մեթոդներ (պատմահամեմատական, նկարագրական, համադրական-գուգադրական, բառաքննական-ստուգաբանական):

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է մի քանի առանցքային կետերով. առաջին անգամ է իրականացվում Սյունիք-Արցախ բարբառախմբի պատմական բառապաշարի նման ընդգրկումն ու համակարգված քննություն: Առաջարկվում են բազմաթիվ բառերի ստուգաբանության բացառիկ լուծումներ, որոնց մի մասն արվում է առաջին անգամ, իսկ մյուս մասը նախկինում ընդունված տեսակետների ճշգրտումներ կամ հերքումներ են (օրինակ՝ «քաշք», «շաղփաղփ», «աջըղ», «ծո՞ւծո՞ւն», «աշան» և այլ բառերի նախահայերենյան ծագման հիմնավորումներ): Գիտական շրջանառության մեջ է դրվում նախկինում չուսումնասիրված հարուստ բարբառային նյութ: Կազմվել են բառապաշարի պատմական շերտերի համեմատական-թեմատիկ տախտակաշարեր՝ վիճակագրական եռաստիճան աղյուսակներով՝ ընդհանուրից մասնավոր, և դիագրամներ:

Աշխատանքի արդիականությունը հեղինակը պայմանավորում է նրանով, որ հայ բարբառների ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են հնչյունաբանական և ձևաբանական մակարդակներում, և «բառապաշարի համակարգային վերլուծությունը մնացել է հետին պլանում» (սեղմ., էջ 3): Գևորգ Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածության» առաջաբանում գրված է. «Հայ բարբառագիտության մեջ մինչև այժմ ընդունված միահատկանիշ դասակարգումների փոխարեն նա փորձում է տալ բազմահատկանիշ դասակարգում՝ հենվելով համապատասխան աղյուսակների և թվային ցուցանիշների վրա: Ինչպես հայտնի է, հայ բարբառների դասակարգման մեջ գոյություն ունեցող սկզբունքների տեսական և պատմական անբավարար հիմնավորվածությունը, դասակարգման ելակետային միավորների՝ բարբառների, ենթաբարբառների և խոսվածքների առանձնացման որոշակի սկզբունքների ու չափանիշների բացակայությունը, այլև դասակարգման մեջ ընդգրկվող որոշ բարբառների վերաբերյալ տեղեկությունների ակնհայտ անբավարարությունը դուռ են բաց արել կամայական և սուբյեկտիվ մեկնաբանությունների համար, հասցրել մի վիճակի, երբ ամեն մի բարբառագետ իր ուսումնասիրած միավորը որակում է ըստ իր հայեցողության» (Գ. Ջահուկյան, «Հայ բարբառագիտության ներածություն», էջ 5): Նույն աշխատության «Բարբառների բառային հնաբանությունները (արխաիզմները)» գլխում (նույն տեղը, էջ 277-330) Գ. Ջահուկյանը նույնպես ներկայացնում է հայերենի բարբառների մեջ գոյություն ունեցող հնդեվրոպական արմատները:

Ուստի Արցախ-Սյունիքի բարբառներում պահպանված նախահայերենյան և հին հայերենի բառերը հնարավորություն կընձեռեն «նորովի գնահատել բնիկ հայկական շերտը, վերանայել որոշ բառերի՝ փոխառություն համարվելու տեսակետները և առաջադրել ստուգաբանական նոր վարկածներ»: Հեղինակն անդրադարձել է նաև մի ցավոտ խնդրի. Արցախի «բռնի հայաթափման» պատճառով բարբառային միավորները կանգնած են կորստյան վտանգի առջև: «Այս պայմաններում բարբառային ժառանգության փաստագրումը, գիտական վերլուծությունն ու ամրագրումը դառնում են ոչ միայն լեզվաբանական, այլև ազգային-մշակութային հրատապ խնդիր» (սեղմ., նույն տեղում):

Ըստ հեղինակի՝ ատենախոսության մեթոդաբանական հիմքը եռեզր համեմատության սկզբունքն է.

«ա. Բարբառային տվյալի համաժամանակյա վերլուծություն,

բ. Տարածամանակյա համեմատություն հին հայերենի գրավոր վկայությունների հետ,

գ. Պատմահամեմատական վերլուծություն հնդեվրոպական նախալեզվի հետ» (ատ., էջ 27):

Գևորգ Զահուկյանը, ձեռնարկելով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ ըստ նրանց հնչյունական, քերականական և բառային հիմնական առանձնահատկությունների, նպատակ էր դրել հայ բարբառների նկատմամբ պարզապես կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքներն ու մեթոդները, մասնավորապես այսպես կոչված զուգաբանությունների՝ իզոգլոսների մեթոդը (տե՛ս նույն տեղում, էջ 13):

Սույն ատենախոսությամբ հեղինակը նպատակ է դրել Արցախ-Սյունիք տարածաշրջանի բարբառների բառապաշարի պատմական շերտերի քննությամբ վեր հանել նախահայերենյան, գրաբարյան և փոխառյալ բառերի դրսևորման օրինաչափությունները: Աշխատանքում գործածվել են պատմահամեմատական, նկարագրական, համադրական-զուգադրական, բառաքնական-ստուգաբանական վերլուծության մեթոդները: Ուշագրավ են հեղինակի կողմից օգտագործված ուսումնասիրության գիտական, կրոնական, բանահյուսական, ազգագրական աղբյուրները, լեզվական կորպուսներն ու տվյալների բազաները:

Համեմատական բարբառագիտության, պատմական բարբառագիտության և համեմատական լեզվաբանության բնագավառում իսկապես չի եղել նման փորձ, որտեղ Արցախ-Սյունիք բարբառային բառերը համակարգված և ամբողջական քննության ենթարկվեն: Հեղինակն ապացուցում է, որ հայերենում դեռևս կան բազմաթիվ հարցեր, որոնք հանգամանալից քննության կարիք ունեն: Այս հիմունքով՝ ատենախոսության մեջ առաջ են քաշում ստուգաբանական նոր լուծումներ-վարկածներ, որոնք չափազանց զգուշությամբ են կատարված՝ «կարծում ենք», «թերևս», «հնարավոր է» կանխադրող բառերով: Շատ բառեր էլ, որոնք թեև վերլուծված են ատենախոսության մեջ, դեռևս չունեն ստուգաբանական վերջնական պատկեր

(աղյուսակներում դրանք դրվում են «?» նշանով): Հեղինակը հետագա ուսումնասիրողների համար թողնում է մեծաքանակ նյութեր, որոնց ծագումնաբանական խնդիրները ընդգծվում են գիտատեսական հիմքերով, տրամաբանված, և դրանցից յուրաքանչյուրին հակադրվելը նույնպես պահանջում է ոչ մակերեսային, այլ խոր և համակարգված մոտեցում:

Երկրորդ գլխում քննվել են հին հայերենի բառապաշարից Սյունիք-Արցախի բարբառներին անցած լեզվական տարրերը, ինչպես նաև այդ շրջանի փոխառությունների «ծագումնաբանությունը»: Հին հայերենից անցած և գրաբարում վկայված բառերը քննելիս Մ. Քումունցը նկատում է, «...որ որպես կանոն, նոր ձևավորվող շերտն իր մեջ ներառում է նախորդի ավանդները: Հայերենի բառապաշարի հիմնաշերտը, որով լեզուն զարգացել, գրական ու բարբառային տարբերակներ է առաջ բերել, կազմում են հնդեվրոպական բառերը» (ատ., էջ 270):

Հեղինակը քննում է հին հայերենից Արցախ-Սյունիք բարբառախմբին անցած թեմատիկ բառախմբեր, «...որոնք գրաբարի համեմատությամբ ունեն ձևիմաստային առանձնահատկություններ կամ ուղղակի կրում են այն ընդհանուր հատկանիշները, որոնք արձանագրվում են հայերենի գրական և խոսակցական տարբերակների համար» (ատ., էջ 72): Այսպես՝ արհեստի բնագավառի բառերն առավելապես եզրույթի նշանակություն ունեն, սակայն մի մասը փոխարինվել է բարբառային կամ փոխառյալ բառով, օրինակ՝ *սսսս* // *ծօսս*, *ձող* // *ծօ՞ղ*: Գոյականներից առանձնացվել են գործիքների անուններ և նույնիսկ տրվել դրանց՝ այլ բարբառներում ունեցած տարբերակները, ինչպես՝ «...Ալշ., Խրբ., Կր., Մշ., *ուրաֆ*, Ախց., Ջղ., Երև., Կր., Սլմ. *ուրաք*, Ազլ. *ուրէք*, Սվեդ. *ուրո՞ւֆ*, Հմշ. *յօֆ*, Ջթ. *ույօք* // *ուրօք*»: Թեմատիկ խմբերը ունեն ենթախմբեր, ինչպես՝ արհեստի հետ կապված նյութեր՝ *ածուխ* // *ան(ն)ձուղ*, *արծաթ*, *արծաթեղեն* // *ըրծաթեղեն* // *ըրծաթի*, *երկաթ* // *արկաթ* և այլն: Մասնագիտություն, զբաղմունք մատնանշող բառեր՝ *բրուտ* // *պու՞(ը)ի/րու՞տ*: Արհեստի հետ կապված գործողության անուններ՝ *բով* // *պօ՞ւվ* // *պէւվ*: Ընդգրկվել են նաև բուսանուններ, համեմունքների, ուտելու բույսերի անվանումները (մարդկանց և կենդանիների համար)՝ բարբառային տարբերակներով, այսպես՝ *դաղձն* > *տա՞խձը* // *տախցը* // *տա՞խսը* // *տախձնը*, *թրթնջուկ* > *թրթնջ/ձուկ*, *խոռ* > *խօռ(ն)ը*, *խոտ* > *խօտ*, *ծներեկ* > *ծը/ինէփակ*, *կոտեմ* > *կօտեմ* // *կօ/ու/տեմնը*, *կորնգան* > *կոր/ռ/ընգա*, *մամուռ*

> մամուռնը, շրեշ > շ/ս/իրի/ե/ջ/շ/ժ, սամիթ > սամե/ի/ը/թ, սիպեղ > սիբեղնը // սիվեղ, սունկն > սոնգնը // սոնգուն (Խծբ. խովա-սունք) և այլն:

Այս գլխում նույնպես որոշ անվանումներ առաջին անգամ ենթարկվել են բառաքնության և ստուգաբանության: Ուշագրավ է *գիլմասրի* բառի ստուգաբանությունը, որը հոդվածի տեսքով հանդիպում ենք նաև հեղինակավոր «Լեզու և լեզվաբանություն» հանդեսում, *երկանք* // *արկանք* բառի քնությունը «Դպրատուն» հանդեսում և այլն:

Ատենախոսը հին հայերենի շրջանից Արցախ-Սյունիք բարբառախմբին անցած փոխառությունները ենթարկել է ծագումնաբանական դասակարգման: Այս հիմունքով հիշատակվում են նաև այն փոխառությունները, որոնք հայերենին անցել են ավելի վաղ շրջանում և ընդհանուր տարածում ունեն գրաբարում, միջին հայերենում և բարբառների մեծ մասում, օրինակ՝ պարսկերեն *խոկ* > *խոկալ* (*hōg*): Պեղվել և քննվել են այնպիսի փոխառություններ, որոնք հին են ու հիմնականում հանդիպում են Սյունիք-Արցախում: Դրանք կարևոր են նաև հայ-իրանական ժողովրդի միջմշակութային դարավոր պատմության համատեքստում, ինչպես՝

Խաշփուշ, Գորիսում՝ *խաշփուշ* // *խասփուշ* «թեթևաբարո, վատ բանի ընդունակ, անզգամ»,

Թա՞բ «բնավորություն, բնկուն բնավորություն» (այստեղից՝ *թա՞բը ծանդըր*, *թա՞բը տաք*), որ հին հայերենի *տապ* «տաքություն, ջերմություն» բառի բարբառային տարբերակն է,

Թա՞մբի («խաղի տեսակ, որի ժամանակ մեկը մյուսին պետք է խփի կամ բռնի՝ մեկ ոտքով վազելով, հետո էլ բռնվողը նույնն անի, ու այսպես շարունակ»),

Խըրէգ «քիչ, սակավ», պրթ. *xwurdag* «մի փոքր բան, մասնիկ» < *xwurd* «փոքր, քիչ» և այլն:

Ատենախոսության **եզրահանգումները** համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Սյունիք-Արցախի բարբառները հայերենի բնիկ բառաֆոնդի պահպանման և վերականգնման կարևորագույն օջախներից են: Հնդեվրոպական ծագման բառային միավորների բարձր պահպանվածությունը (ավելի քան 63%) և արխաիկությունների գերակշռող առկայությունը (ավելի քան 80%) փաստում են բարբառային միջավայրի բացառիկ պահպանողական բնույթի և լեզվի հնագույն շերտերի հետ անխզելի կապի

մասին: Աշխատանքը հիմնավորում է, որ Սյունիք-Արցախի բարբառների լեզվական հիմքերը դրվել են հայերենի՝ որպես առանձին լեզվի ձևավորման ամենավաղ փուլերում՝ դեռևս նախագրային ժամանակաշրջանում: Բարբառները ներկայացվում են որպես գրաբարի ոչ թե պասիվ, այլ ակտիվ և ստեղծագործաբար վերախմաստավորող ժառանգորդներ՝ ցուցադրելով իմաստային տեղաշարժերի բոլոր հիմնական տիպերը և բառաստեղծական հարուստ ներուժը: Փոխառյալ շերտերի վերլուծությունը հստակորեն արտացոլում է պատմական փոխշփումների բնույթը՝ իրանական տարրի գերակշռությամբ:

Ատենախոսությունը, իր տեսական և գործնական նշանակությամբ, կարևոր ներդրում է հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության, բարբառագիտության և համեմատական լեզվաբանության մեջ: Այն հիմք է ստեղծում հետագա բառարանագրական, էթնոլեզվաբանական և պատմամշակութային ուսումնասիրությունների համար՝ հատկապես կարևորվելով վտանգված լեզվական ժառանգության պահպանման համատեքստում:

Առաջարկություններ

1. Ատենախոսությունը, իր ընդգրկունության պայմաններում, կենտրոնացել է նախահայերենյան և հին հայերենի շերտերի վրա, սակայն ցանկալի կլիներ ավելի հանգամանալից քննություն՝ միջին հայերենյան (եթե կան այդպիսիք) և նոր աշխարհաբարյան շրջաններից ավանդված բառաշերտերի և դրանց՝ բարբառի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ, ինչը կարող է դառնալ հետագա հետազոտությունների թիրախ:
2. Թեև ատենախոսությունը մանրամասն ներկայացնում է հին հայերենի փոխառյալ շերտերը՝ ըստ ծագման լեզուների, սակայն ապագա աշխատանքներում կարելի է խորացնել սոցիալ-լեզվաբանական վերլուծությունը՝ բացահայտելու կոնկրետ պատճառներն ու մեխանիզմները, թե ինչու են բարբառային փոխառությունները (արաբական, պարսկական, թյուրքական, ռուսական) արմատավորվել ուսումնասիրվող բարբառային տարածքում՝ դուրս մղելով բնիկ բառերը:

3. Ներածությունը բավականին ծավալուն է: Թեև տեսականորեն արտացոլում է ատենախոսության բնագավառը, հիմնական նպատակները, հասկացությունները և այլն, այդուհանդերձ կարծում ենք, որ պետք չէր այդքան մանրամասն ներկայացնել գրականության ակնարկը:

4. Աշխատանքի եզրակացություններն ամբողջովին արտացոլում են ատենախոսության արդյունքները: Սակայն կարծում ենք, որ Առաջին գլխի թեմատիկ խմբերի վերջում տրված վիճակագրական տվյալները (Աղյուսակ 1.2 և այլն), որոնք ավելի շատ հիշեցնում են եզրակացություններ յուրաքանչյուր ենթագլխի համար, կարող էին տեղ գտնել հիմնական եզրակացություններում:

Ատենախոսության թեման՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը», լիովին համապատասխանում է «Բանասիրական գիտություններ» «Ժ.02.01 – Հայոց լեզու» մասնագիտության պահանջներին՝ համապարփակորեն ներառելով պատմական լեզվաբանության, բառագիտության և բարբառագիտության հիմնախնդիրները: Աշխատանքի մեթոդաբանական առանձնահատկությունները՝ մասնավորապես պատմահամեմատական խորքային վերլուծությունը, հնդեվրոպական նախալեզվի հիմքերի և բազմաթիվ լեզուների հետ համեմատությունը, ինչպես նաև նոր շրջանի օտարալեզու փոխառությունների բազմաճյուղ քննությունը (պարսկական, թյուրքական, արաբական), թույլ են տալիս այն դիտարկել որպես արժեքավոր ներդրում նաև «Ժ.02.02 – Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտության շրջանակներում:

Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները լիովին ընդգրկված են հեղինակի կողմից հրատարակված 70-ից ավելի գիտական հոդվածներում: Դրանցից մի քանիսը, որոնք հատկապես կարևոր են ատենախոսության հիմնարար դրույթների ամրապնդման համար, ներառում են «Indo-European Origins of Syunik-Artsakh Agricultural Terms» (2025), «Անգ > (Ա)անգեղ («անգղ») բառի ստուգաբանությունը» (2019) և «Հնդեվրոպական gŷhisla- /ջիլ/ արմատի ընդհանրացումները հայերենում և թյուրքական լեզուներում» (2017) հրապարակումները: Այս հրապարակումները լույս են տեսել ինչպես միջազգային հեղինակավոր, այնպես էլ հանրապետական գիտական պարբերականներում, ինչը

վկայում է աշխատանքի նյութերի բարձր գիտական արժեքի և դրանց գիտական շրջանառության լայն ընդգրկման մասին:

Սակայն, չնայած ակնհայտ գիտական արժեքին, ատենախոսությունն ունի նաև որոշ բացթողումներ և վրիպակներ, որոնք ցանկալի է հաշվի առնել աշխատանքի հրապարակումից առաջ:

Ոճական և շարահյուսական դիտարկումներ

Էջ 4, տող 12-13. «Սյունիք-Արցախի պատմական տարածքը ներառում է Սյունիք և Արցախ նահանգները» - առաջարկվում է «ընդգրկում է» ձևը:

Էջ 6, տող 5-6. «Դեռևս V դարում հայ մատենագիրները վկայում են այս տարածքի լեզվական ինքնատիպության մասին» - ավելի ճիշտ կլիներ «վկայություններ են տալիս»:

Էջ 8, տող 15-16. «Արտասահմանյան բազմաթիվ հեղինակների, միջազգային ինստիտուտների համար արդիական են» - նախադասության կառուցվածքը խճճված է, առաջարկվում է վերաձևակերպել:

Էջ 23, տող 3-4. «Այսպիսով՝ Սյունիք-Արցախի բարբառախմբի բառային կազմի ուսումնասիրությունը հայ բարբառագիտության կարևորագույն ուղղություններից է» - չափազանցված ընդհանրացում՝ առանց համապատասխան հիմնավորման:

Մատենագիտական վրիպակներ

Էջ 4, ծանոթագրություն 2. «Բարխուդարեանց 2018» - հրատարակության տարեթվի և վերնագրի անճշտություն:

Էջ 20, ծանոթագրություն 61. «Buke 1988» - հեղինակի ազգանվան ուղղագրական սխալ (պետք է լինի Buck):

Որպես կոնկրետ առաջարկություններ՝ կցանկանայի առաջարկել հետևյալը.

1. Ավելացնել բառապաշարի քանակական վերլուծության բաժին՝ ներառելով վիճակագրական տվյալներ բառապաշարի տարբեր շերտերի հարաբերակցության մասին:
2. Ընդլայնել համեմատական նյութը՝ ներառելով հայերենի այլ բարբառների և հարակից լեզուների բառապաշարի հետ համեմատություն:
3. Լրացնել բառերի նկարագրությունը՝ ներառելով դրանց տարածման աշխարհագրական սահմանները և գործածականության աստիճանը:

4. Ավելացնել բառապաշարի դինամիկայի վերլուծությունը՝ ներառելով բառապաշարի փոփոխության միտումների ուսումնասիրություն:

Չնայած թվարկված դիտարկումներին, վրիպակներին և առաջարկություններին, որոնց մի մասը, հասկանալի է, հնարավոր չէ ընդգրկել մեկ ատենախոսության սահմաններում, պետք է հատուկ ընդգծել, որ դրանք չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական արժեքը: Աշխատանքը ներկայացնում է հայ պատմական բարբառագիտության մեջ նշանակալի ներդրում և արժանի է բարձր գնահատականի: Հեղինակի կողմից ներկայացված հարուստ նյութը և բառապաշարի համակարգային վերլուծությունը հիմք են հանդիսանալու Սյունիք-Արցախի ստուգաբանական բառարան կազմելու համար, ինչը կդառնա հայ լեզվաբանական գիտության համար կարևոր իրադարձություն:

Եզրափակելով՝ ցանկանում եմ նշել, որ Մհեր Քումունցի ատենախոսությունը լիովին համապատասխանում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհելու պահանջներին: Աշխատանքը տպավորում է իր գիտական խորությամբ, գիտական եզրույթների հստակ ձևակերպմամբ և կիրառմամբ, նյութի հարստությամբ և մեթոդաբանական բարձր մակարդակով:

Այսպիսով, Մհեր Սուրենի Քումունցի «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» դոկտորական ատենախոսությունն ամբողջության մեջ մի նոր աստիճանի է բարձրացնում պատմական-համեմատական լեզվաբանության, բառագիտության և բարբառագիտության հիմնախնդիրների վերաբերյալ մինչև այժմ հրապարակված ուսումնասիրությունները և նոր խոսք է այդ բնագավառներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է դոկտորական ատենախոսության բովանդակությանը: Հրատարակված գիտական աշխատանքներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝

Պաշտոնական ընդդիմախոս՝  Թ. Ս. Շահակեայան

Հաստատում եմ բ.գ.դ. , պրոֆեսոր Թ. Ս. Շահվերդյանի ստորագրությունը.

Ս. Ս. Բեժանյան